ին։ Նաւի այդ անսպասելի այցելութիւնը մի տեսակ նախախնամական բնոյթ էր կրում. հեռաւոր այդ ուրուականը թառել էր հոգիների ալեկոծուած ծովի վրայ եւ երազի նման նայում էր դէպի հեռուն։

Մինչ մասնագէտները շարունակում էին աւելի քան երբեք տարակուսիլ, գիտէք էլի՝ քմծիծաղ, իմաստակութիւն, բամբասանք, բուն ժողովուրդը ,այդ մեծ երախան, ուզում էր հաւատալ, պէ՛տք ունէր հաւատալու։ Պարոնայք ինժեներները, զինուած գիտութեան բոլոր տուեալներով, ապացուցանում էին՝ 2×2= 4, որ աչքի առաջ ունենալով բազմաթիւ զառիվերները, ճանապարհի դրութիւնը, նրա օձապտոյտ բնոյթը եւ հազար ուրիշ անյաղթելի պատճառներ անկարելի են դարձնում, որ նաւը տեղ հասնի։ Իսկ նաւապետը, այլեւս ծիծաղելի, քրտնաթոր վազվզում էր, բացատրում, համոզում, պոռում, կանչում։ Արուեստն փողոցը անցնելու համար մի ամիս դրին ու նաւը, երբ հասաւ Նորքի ստորոտը, ուժասպառ թեքուեց եւ իր ծխնելոյզը պարապ թնդանօթի նման ուղղեց դէպի Արարատ։ Դէ՛, հիմա տեսնենք, ինչպէ՞ս պիտի բարձրանայ։ Բարձրացա՛ւ։ Լծկան եղների թիւը աւելացրին, անիւներին երկաթ խփեցին եւ Սիզիֆը ուսերի վրայ պողպատ զետեղեց։

Նաւը կանգ առաւ Երեւանի կատարին՝ Նոյեան տապանից դուրս եկած հսկայ մի թըռչունի պէս։ Նա նստեց մրափող, զաւառային այս քաղաքի գլխին, հեռաւոր ծովերի անբրջային տեսիլքի նման, եւ պարտադրեց իր ներդաշնակ ձեւը։ Իսկապէս, չկայ աւելի գեղեցիկ յղացում քան նաւային ճարտարապետական ձեւը։ Տրամաբանական, հաւասարակշիռ, ներդաշնակ եւ պարզ։ Ոչ մի աւելորդ գիծ, ամբողջական, սլացիկ՝ մարմին առած նետի նման, հաստատուն եւ անփոփոխ իր նախնական բովանդակութեան մէջ։

— Նաւը քաղաքի վրայ...

— Մի տեսակ կենդանի արձան՝ խորհրդանշանական եւ հրապուրիչ։ Նրա ստուերը տիրում էր առօրեայ կեանքի վրայ, ուժ եւ հաւատք էր ներշնչում, ոսկէ երազներ էր արթնացնում։ Նաւը Արագածի եւ Մասիսի դէմ, Արարատեան դաշտի վրայ՝ պատրաստ ճախրելու... Երեկոները, երբ Արարատը բոցերի մէջ թաւալ էր գալիս, նրա ճերմակ մոռի վրայ վարդագոյն ճառագայթներ էին թառում եւ նաւը նմանում էր սիրահարուած մի աղջկայ, որ դիտում է այրուող հորիզոնը...

Քանաքեռի մօտ սկսուեց նրա Գողգոթան։ Աչունը, տխրադալուկ աչունը, ամպ եւ անձրեւ բերաւ։ Ամէն ինչ դժուարացաւ։ Տարուան այդ եղանակին երթեւեկութիւնը շատանում է. գիւղացիները սայլերով փայտ եւ պաչար են տանում քաղաք, իսկ ճամբան առանց նրան էլ նեղ է։ Մարդիկ նախ զարմանքով նայեցին. դա՛ ինչ էր, ճամբան եկել կտրել էր։ Դժուարութեամբ շրջեցին. սկսեցին մրթմրթալ, բողոքել. «Էդպէս էլ բան կ'ը՞լի... Էդպէս էլ բան»... Ու կարծես, բաւական չէր, որ խճուղին անանցնելի էին դարձրել, դեռ, ամէն անդամ, աղաչում պաղատում էին, թէ եղներդ մի վայրկեան տուր, մի քիչ էլ քաշենք...

Ախտայի մօտերը ցեխը շատացաւ, սկսեց սաստիկ հով փչել եւ լեռներից իջաւ սառը մի ցուրտ։ Զառիվար իջնող ճամբան բոլորելու ժամանակ անիւները փուլ եկան եւ նաւը աղմկալից հառաչով նետուեց դուրս եւ կողքի վրայ վայր ընկաւ։ Ձմեռ էր, ձիւն։ Նաւապետը սարսափած, մատները մազերին տարաւ եւ խենթի նման սկսաւ դառնալ։ Պարոնայք ինժիներները ուրախ էին։ Ասացինք՝ չլսեցին. նախընտրեցին հաւատ ընծայել, արկածախնդիր, շահամոլ, անյայտ եւ մութ մի անձնաւորութեան. դէ՛, հիմա թո՛ղ դնան էշը ցեխից հանեն։

Քաղաքը, որի վրայից նաւը անցել էր երազի նման, այլեւս տարուած իր նեղմիտ, քաղքենի եւ մգլոտուած կեանքով, սկսեց անպատկառ կատակներ անել։ «Նաւը ուշաթափուել ա... Էն ա նաւարկում ա ձիւնի վրայ... վազում ա, վազում ա»... Նաւապետը էլ չէր կարողանում փողոցում երեւալ։ Նայում էին, ծիծաղում, խօսք նետում։ Ընկե՛ր ադմիրալ, ընկե՛ր ադմիրալ, Սեւանայ ծովի նաւատորմիղը ի՞նչ եղաւ։

— Ամբոխը։

— Դեմոկրատիան. la cannaille...

— Իսկ նաւը պառկել էր ցեխի եւ ձիւնի մէջ՝ սպանուած փիղի նման։ Ի՞նչ խղճալի տեսարան էր իսկապէս։ Այս լեռների վրայ, ինչպէս տեսնում էք, ձմեռը բռնակալ է եւ ա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան